

# ՇԻԳԱԿՈ

(Տես յ'էջ 394)

Շիգակոյի այս մասը չի տեսնուիր. քայլ մ'աւելի առնունց, և վերամբարձ դործոյ մը մէջ նստինք, շունչերնիս քիչ մը բռնենք. և ահա ակնթարթի մը մէջ մենք զիեզ գետնէն (Երկրէն) տասնուշինք կամ քսան յարկ բարձրացած կը գոնենք: Չորս կողմերնիս նայինք, և խարուած պիտի ըլլանք կարծելով թէ ամենաբարձր ելեր ենք. վասն զի ամէն կողմէն ահազին շնորհեր կը բարձրանան, որ իրենց բարձրութեան համեմատ հաստատուն, ներքին ամենալաւ և ճաշակառ բաժանմամբ և հաստատուն հիմամբ:

Աշքը չի կրնար ընդպրկել բարձրէն քաղաքին բովանդակ ընդարձակութիւնը. արևելեան կողմը՝ լճին բարձրացուցած թումբը՝ տասուերկու մղոն Կ'երկարի, հրդին աւերակաց լիայ կառուցուած գեղածիծաղ արուեստական մարգագետնօց և պարտէզներով, որովք ձևացած իսկ է յիշեալ թումբը: Շոգենաւեր, առաջասասաւրներ, և այլ անթիւնաւեր Շիգակոյի գետաբերնէն կը մոնեն յընդպրձակ լիճն: իսկ գետին մէջ ահազին շարք մը ամէն սեսակ նաւերու, և նորա ձևացուցած այլեւայլ փոքր ջրանցներու մէջ՝ մեծ շարժում մը միշտ կը ամիրէ. այս ջրանցից ներքին թումբերուն երկայնութիւնն է քառասուն մղոն. իսկ անկէ անդին ալ մեծամեծ արուեստական լճերու մէջ ահաւար կոյս մը երկաթի և քարանց, որոց իւրաքանչիւրին մէջ ամէն տարի հարիւրառ միջիններու վաճառականութիւն կ'ըլլայ:

Բայց բարձրէն տեսնուած ծխահանից, աշտարակաց, գմբէթներու, և ամէն տեսսակ շինուածոց կոյսոն՝ բուն քաղաքին գետ ազօտ քաղաքար մը կուտայ մեզի. Փլարք-Սղրիդէ կ'անցնի Cable Cargi մէկ զիծն. շրջաբայոթեան այս նոր զրութեամբ հասարակաց կառցերը քաղաքին մի ծայրէն՝ ի միւն կը լազեն առանց ձիոց կամ մեղենայից, այլ պողպասեայ զօրաւոր պարանաց միջոցաւ, որը կառաց անցած ճանապարհաց տակը զետեղեալ են. և կարծես թէ կառքը մովական զօրութենէ մը մղեալ կ'ընթանայ: Այս կառքերուն միոյն մէջ նստինք և երթանք 'ի լինքըն բարք, որ գետէն մէկ ու կէս փարսախ հետի է 'ի հիւսիսկողմն:

Այս ընդպրձակ պարտէզը՝ ուր զալ տարի Գոլսմիեան աշխարհահանքէսն տեղի պիտի ունենայ, և որոյ վրայ քանի մը խօսք ալ պիտի ըսենք, ժամանակաւ աւազուա բլրակներէ ձեւացած երկիր մ'էր. յետոյ փոխուեցաւ 'ի գերեզմանաստուն, իսկ այժմ գեղեցիկ ուղիներով, արուեստական հովաստուն անտառիկներով և բլրակներով, առուակներով, լճակներով, աղմբակներով և արձաններով զարդարեալ է. հուսկ ուրեմն ընդպրձակ և ծառապարոդ ուղի մը որ քաղաքին շրջանը կ'ընէ՝ կը միացնէ զլինքըն բարք՝ ձաքսնի, Ռոտշինզինի, Հումանուզի, Կարֆիլտի, Տուկլասի և Սութի պարտիզաց հետ, որք ցրուեալ են քաղաքին շուրջը. եթէ այս վերջին կէտէն դառնանք դար-

ձեալ մեր մեկնած վայրն՝ այսինքն՝ ՚ի կեդրոն քաղաքին՝ քսանութեց մղոնի փոքրիկ ճանապարհորդութիւն մ'ըրած կ'ըլլանք :

Բայց պէտք չէ այս մեծագործութեան վրայ զարմանալ, վասն զի աստ ամենայն ինչ համեմատական է, աննշան դիտողութիւն մ'է՝ բայց բնենք. ամբողջ աշխարհի վրայ այնշափ խոզ չի մորթուիր տարուէ տարի որշափ ՚ի Շիգակ. եթէ հրաւիրէ իւր երկրատէրներն կերպոնացընել իրենց ցորենց արտադրութիւնն՝ իսկոյն այս նկատմամբ ալ աշխարհին ամենէն աւելի մեծ և հարուստ ամբարանոցն և վաճառանոցն կ'ըլլայ. իսկ օճառի շինութեան համար ալ յիրաւի տիտաննեան կաթսայներ կը գործածէ. իրեն զարծառուններն իրենց տեսակին մէջ մի միակ են բովանդակ աշխարհի վրայ. չէնքերն ամենէն աւելի փառաւոր և մեծագործ, պղղոսայներն լայն և ամենամաքուր, իսկ պանդոկներն հանգիստ և փառաւոր :

1848ին Շիգակի և կալենայի երկաթուղեաց միութիւնը՝ ահիւ և գողով սկսաւ իւր գործողութիւնները. այժմ Շիգակ այնախոի կերպոն մ'է՝ ուստի կը բաժնուին 44, 265 մզոն երկաթուղիներ, որ երկրորդական զծերու հետ 85, 500 մզոն կ'ընէ. այս երկաթուղեաց միջոցով 485 ին Շիգակ 77 միինոն հարիւրայիտր ցորենական արմտիք կ'ընդունէր իւր հրապարակին համար. սա աշխարհին ամենէն մեծն է, ինչպէս ըսինց, բայց մեծութիւնը լաւ ևս ըմբռնելու համար՝ պէտք է համառա այցելութիւն մ'ընենք ՚ի Սահկարանն վաճառականութեան (the Board of trade).

Այս սակարանը 1909 անդամ ունի. մասից միահամուռ առուրքն է յիսուն հազար քրանք, իսկ ասարեկանը գրեթէ չորս հարիւր. ամէն առաւօտ կանուխ գործերը կը կարգադրուին պաշտանէից և միջնորդաց ձեռցով. բայց անփորձ մը որ առաջին անգամ ներկայ գտնուի նմանօրինակ առուրևառի մը՝ այս փառաւոր ընդարձակ սրանը կատարեալ յիմարանոց կը համարի. վասն զի ձևերէ զատ ուրիշ բան չի տեսնէր: Բայց այս ձևերն ամէնն ալ իրենց նշանակութիւնն ունին. յատաջ նետուած և բաց ձեռքը՝ վաճառումն կը նշանակէ. իսկ դէպ ՚ի վար հակեալ՝ զնումն՝ Վեր բարձրացեալ մատները չափերու հազարաւոր քանակը կը ցուցնեն. օրինակի համար Ալ՝ 10, 000 շափ ցորենց կ'ուզէ փանուել, թը իսկոյն զայս տեսնելով՝ նշան մը կ'ընէ, միսքը կը հասկցնէ և կը գնէ. այն ատեն՝ Ալ կը ճղքէ ահագին բազմութիւնը, կը մերձնայ թին և թղթոյ թերթիկ մը կը ներկայացնէ որ այնքան ցորենց քանակութեան ստացագիրն է, և մի և նոյն ժամանակ թէն հաւասար արժէիւր փոխանակագիր մը կ'առնու. մէջտեղը ցորենի հասիկ մ'ալ չի տեսնուիր, բայց առևտուրը կը վերջանայ:

Վաճառականական այս գործողութեանց հիմը զիւրաւ կրնայ ըմբռնել մէկը՝ եթէ ցորենց շատեմարաններն այցելէ. այս ահազին ամբարանոցներն 26 հատ են քաղաքին մէջ, որոց միահամուռ ընդունակութիւնն է տասը միլիան հարիւրայիտր. յանձնաման և տեղափոխութեան գործողութիւններն ամենայն ճշգրութեամբ և անհնարին արագութեամբ կը կատարուին. 3600 հարիւրայիտր

ընդունակութեամբ կառք մը քանի մ'երկլայրկինի մէջ կը բեռնաւորեն կամ կը դատարկեն :	
Այսուհետեւ 1891ի առեւորսկան ցուցակը կը ներկայացնենք աստ ըներցողաց :	
Այսուհետեւ . . . . .	ֆռ. 2,485,000,000
Վաճառականութիւն . . . . .	» 2,585,000,000
Զեռագործք . . . . .	» 2,835,000,000
	<hr/>
	Միահամուռ 7,905,000,000

Նիւթականէն վերջը՝ նայինք նաև մուաւորականը : Շիզակոյի նախնական վարժարանք յաճախեալ են 140,000 աշակերտներէ, որք միջին հաշտով այս ընթացքը երեք տարուան մէջ կ'աւարտեն. բազմաթիւ են երեկոյեան դպրոցք ուր կը յաճախեն մասնաւորապէս լեզուակը պատանիք. բարձրագոյն ուսմանց ամէն մասնաճիւղին համար ալ մասնական վարժարաններ կան, և նորահաստատ համալսարանն ալ շատ ծաղկեալ զիրքի մէջ է և մեծ յոյս կոտ տայ:

Այլ և այլ զաւանութեանց եկեղեցիք 350 են, որք միշտ խռնեալ են 'ի բարեպաշտից. իսկ օրճարանք, երաժտութեան և խաղի որակ 6400 են: Նմանապէս մեծագործ են իրեն բարեգործական հաստատութիւնները. այնքան վաճառականական շարժում կայ, որ ամէն օր դար մը կ'երևնայ. իսր զինաւոր յատկութիւնք են զուարթութիւն և մեծութիւն:

Քանի մը խօսք ալ պիտի ըսենց ուրիշ առթիւ իսր գալ տարուան աշխարհանանվիսին համար. զոր Ամերիկայի գիւտին դի գարագարձին առթիւ, Միացեալ Նահանգաց Համաժողովն ինուեց 'ի Շիզակի համաշխարհական ցոյցով մը տօնել այս զարեշրջանն, յորում նոր աշխարհն պիտի ուսուցանէ հնոյն թէ ի՞նչ կը հասկըցուի համաշխարհական ցոյց մ'ըսելին :

## Ո Ր Դ Ի Ք

(Տես յէջ 300)

**Ո**ւ է բնութեան օրէնք է սէրն առ ծնողս, և թէ ասսուածաղիք պատուիրան. Կիկերոն զայն ամէն առաքինութեանց հիմն կը համարի. — (Fundamentum est omnium virtutum pietas in parentes). — բնականաբար հայրն և մայրն են մեր առաջին բարեկամները. այն մահկանացուներն են՝ որոց ամենէն աւելի կը պարտինք. սրբազան պարտք մ'ունինք յարգանաց, երախտագիտութեան, սիրոյ և ամէն տեսակ ազնիւ զգացմանց առ նոսա,